Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[81119]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՇՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ ՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ

Հրավիրվածներ ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Բախշյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ա. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտե-

	սագիտական վարչության պետի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի խորհրդական
Կ. Բաղալյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ս. Մելիք-Յոլչյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ֆինանսական իրավաբանական բաժնի պետ

1. Աշտարակ-Թալին (Ծրագիր 2) ճանապարհահատվածի երկշարքանի երթևեկելի մասի քառաշարք երթևեկելի մասի վերակառուցման, Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի վերակառուցման (Ծրագիր 1) և Երևան-Արարատ (Ծրագիր 1) ճանապարհահատվածի ճանապարհային անվտանգության բարելավման կապալառուի ձեռքբերման մրցութային փաստաթղթերում բերված մրցույթի պայմանների և պայմանագրի հատուկ պայմանների հաստատում

(Կ. Բաղալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ նախքան մրցույթի հայտարարումը (մինչև 2011 թվականի հուլիսի 11-ը) ԱԶԲ-ի հետ ևս մեկ անգամ քննարկել մրցույթի պայմանների և պայմանագրի հատուկ պայմանների բոլոր վիճահարույց հարցերը և գալ փոխհամաձայնության.

2) հավանություն տալ՝

ա. Աշտարակ-Թալին (Ծրագիր 2) ճանապարհահատվածի երկշարքանի երթևեկելի մասի քառաշարք երթևեկելի մասի վերակառուցման, Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի վերակառուցման (Ծրագիր 1) և Երևան-Արարատ (Ծրագիր 1) ճանապարհահատվածի ճանապարհային անվտանգության բարելավման կապալառուի ձեռքբերման մրցութային փաստաթղթերում բերված մրցույթի պայմանների և պայմանագրի հատուկ պայմանների նախագծին,

բ. 2011 թվականի հուլիսի 11-ին Աշտարակ-Թալին (Ծրագիր 2) ճանապարհահատվածի երկշարքանի երթևեկելի մասի քառաշարք երթևեկելի մասի վերակառուցման, Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի վերակառուցման (Ծրագիր 1) և Երևան-Արարատ (Ծրագիր 1) ճանապարհահատվածի ճանապարհային անվտանգության բարելավման կապալառուի ձեռքբերման մրցույթ հայտարարելու առաջարկին:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի նոր քարտուղարի նշանակում

(Մ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի քարտուղար նշանակել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Հ. Բեգլարյանին:

3. Ընթացիկ հարցեր

(Մ. Վարդանյան, Ե. Զախարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե. Զախարյանին Պռոշյան սովխոզում 15000 քառ. մետր հողատարածքի սեփականության իրավունքի պետական գրանցման հետ կապված խնդիրները գրավոր ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ